ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով ֆիզիկական կուլտուրայի դասավանդման անհրաժեշտությունը՝ առողջ սերնդի կրթման և առողջ ապրելակերպի քարոզչության համատեքստում,

Ընդունելով վերապատրաստման համատեղ դասընթացների կազմակերպման և անցկացման Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Կողմերն իրականացնում են մասնագիտական և ասպիրանտական հետազոտական համատեղ ծրագրեր:

2.2 Կողմերն համագործակցում են համատեղ կրթական ծրագրերի, ինչպես նաև ուսումնական և լաբորատոր բազաների օգտագործման շրջանակներում, իրականացնում են ուսանողների և դասախոսների փոխանակում՝ համաձայն Կողմերի միջև հետագայում հաստատվող պլանի և ժամանակացույցի,

2.3 Կողմերը համատեղ ստեղծում են կամավորական ուսանողական թիմեր և միասնական ջոկատներ և համակարգում են նրանց աշխատանքները,

2.4 Համատեղ իրականացնում են փոխայցելություններ ուսանողական պրակտիկաների ընթացքում,

2.5 Իրականացնում են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրեր, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ հետազոտություններ,

2.6 Կողմերը համագործակցում են միջազգային գիտական կոնֆերանսների, սեմինարների, ստեղծագործական բանավեճերի, խորհրդակցությունների համագործակցության շրջանակներում,

2.7 Իրականացնում են գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.8 Կարող են համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ,

2.9 Հնարավորություն ունեն համատեղ օգտագործել կողմերի գրադարանային ֆոնդերը:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է 21.09.2020թ–ին ԱՀ Ստեփանակերտ քաղաքում, երկու բնօրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1	**Կողմ 2**
Արցախի Հանրապետության «Մեսրոպ Մաշտոց համալսարան»	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
ք. Ստեփանակերտ, Գ. Նժդեհի 72	ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
Ռեկտոր՝ Դոնարա Գաբրիելյան	Ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան
Ստորագրություն Կ.Տ.	Ստորագրություն Կ.Տ.